

Ու ժպտելով եւ հեզօրէն
Տըւաւ ողջոյն:

— Հօրդ անունին Սուրբն եմ, ըսաւ,
Զիս կանչողին կը հասնիմ, երբ նեղը ծընայ:
Վազն առաւօտ՝ երրորդ հեղ երբ խօսի հաւ,
Պիտի փոխուի հիւզդ պալատի լուսահամայ,
Պալատին դէմ հեղինէին...
Բայց, ծի՛ ճոռնար, պատուէր ծ'ունիմ...

Առաջատի սուրբ գիշերին,
Պէ՛տք է որ դուն յիշես Սուրբ Կոյնն Աստուածածին...

Տեսիլքն ընդհուպ անյայտացաւ, ամպի պէս:
Հովիւ տըզան կը քընանար.
Ու ճայրն ճունկի՛ իր քովն ի վար,
Ոսկորները կտորելու չափ ուժգնապէս՝
Կուրծքին բըռունցք ճիշտ կը տեղար...:
(Շար.) ՎԱՐՈՒԺՆԱԿ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԸ

Հայ ժողովրդական ստեղծագործութիւնը
շարունակում է բազմապիսի ուսումնասիրու-
թիւնների նիւթ ծառայել: Հէքեաթների, դի-
ցազներգութիւնների և ժողովրդական երգերի
անսահման հմայքը եւ ստեղծագործ ոյժը
դէպ ի իրենց են քաշում հետաքրքիր և հետա-
խոյզ մտքերը նորանոր դանձեր լոյս աշխարհ
հանելու: Մասնաւորաբար հայ ժողովրդական
երգը վերջին շրջանում դառաւ բանասէրների
և երաժտագէտների ուշադիր քննութեան ա-
ռարկայ: Եւ դա ունէր իր պատճառները, նախ
որ երգը իր կրկնակ հանդամանքով ունի թէ՛
դրական և թէ՛ երաժշտական արժէքներ միա-
ժամանակ, եւ երկրորդ որ եւրոպական ար-
դիական երաժշտութեան մէջ ժողովրդական
երգը հանդիսանում է ստեղծագործական ոյժի
կարեւորագոյն ազդակներից եւ արժէքներից
մէկը:

Ժողովրդական երգի մէջ սակայն երա-
ժշտական տարրը աւելի գերակշռող դեր եւ
արժէք ունի, քան դրական-բանաստեղծականը:
Երգի եղանակի մէջ է որ արտացոլում են
տուեալ հաւաքականութեան հոգեկան ապ-
րումները, միւս կողմից՝ լեզուի յարաճուն
զարգացման հետ կապուած փոփոխութիւն-
ները անխուսափելիօրէն ազդում են երգի
բառերի վրայ: Բացի այդ՝ ժողովրդական երգը
զրտւերում է հաւաքական կեանքը օրը օրին,


և նոր երեւոյթները, նոր պայմանները եւ
դէմքերը յաճախ նոյ թառերով ընկնում են
կննդէն եղանակի տակ: Յաճախ ժողովրդական
երգի բառերը շինում են յանպատրաստից,
ինչպէս օրինակ՝ պարերգների բառերը: Պարի
ժամանակ, երբ սպառում են երգի նախնա-
կան բառերը, բայց շարունակում է պարի
տրամադրութիւնը, պարողները յարմարե-
ցնում են նոր բառեր, որոնք ընդհանրապէս
զուրկ են ու է զեղարուեստական արժէքից:
Երգի եղանակը մնում է միշտ կենդանի, խօ-
սուն եւ հարազատօրէն սերունդէ սերունդ
փոխանցուող, նա է կրողը ժողովրդական երգի
հասարակական եւ պատմաքաղաքակրթական
արժէքների:

Սակայն նախ որոշենք ժողովրդական եր-
գի սահմանները: Ժողովրդական ենք կոչում
այն երգերը, որոնք ծնւում են ժողովրդի մի-
ջից անանուն հեղինակների կողմից: Բայց
բաւական չէ, որ մի երգ ծնւի ժողովրդից,
որպէսզի դառնայ ժողովրդական երգ, այլ նա
պէտք է ընդունուի ժողովրդի կողմից որպէս
այդպիսին: Ժողովրդական երգեր ստեղծւում
են հազարներով, բայց զբանցից շատ քիչերն
են գոյութեան իրաւունք ստանում: Ժողովրդի
հաւաքական զգացումը, ճաշակը, իր նախա-
պայմաններն ունի այս կամ այն երգը սե-
փականացնելու եւ իրը դարձնելու համար:

Դրանցից ամենէն բնորոշը երգից իր սակ-
 ծոցի անհատականութեան վերջին արժէք-
 ները չէզոքացնելու եւ այդ ուղղութեամբ
 փոփոխութիւններ մտցնելու բացարձակ ի-
 բաւանքն է: Մինչեւ որ երգը չի կորցնում իր
 ստեղծոցի գիմագիծը, նա չի կոչուում ժող-
 վրդական երգ: Այդ պատճառով էլ ժողովրդ-
 դական երգը ծնուում է խորհրդաւոր անյայ-
 տութեան մէջ, եւ երբ ծնուում է, թեւում է, որ
 միշտ էլ եղիւ է: Նա իր սոցիալական հանգա-
 մանքով ամէն տեղ է, աշխատանքի գաշ-
 տում, կրօնական արարողութեան կամ հար-
 սանեկան ծիսակատարութեան ժամանակ:

Ուշագիրը դիտողութիւնը բերում է մեզ
 այն հաւանական եզրակացութեան, որ մեր
 ժողովրդական երգի տարրեր սեռերի միջեւ
 ինքնին զոյւթիւն ունի քաղաքակրթական
 արժէքների որոշ աստիճանաւորում: Միրային
 եւ աշխատանքային երգերը աւելի հին են ի-

րենց ծագումով եւ նախնական, եւ քաղաք-
 կրթական նուազ արժէք ունեն, քան թէ օրի-
 նակ՝ այն երգերը, որոնք կապուած են բնա-
 կավայրի կամ պաշտամունքի բմբունդութեան
 հետ: Հայրենիքի կամ կրօնի երգ ստեղծելու
 համար նախ պէտք է ունենալ կրօնի եւ հայ-
 րենիքի մտածումը, որը ինքնին պայմանա-
 տրուած է որոշ քաղաքակրթական տուեալ-
 ներով: Ըստ այդմ՝ սխալ չի լինի թերեւս եթէ
 մեր ժողովրդական երգերը բաժանենք երկու
 մեծ ընտանիքների. — ա՛) երգեր, որոնք ծն-
 ւում են զուտ հոգեբնախօսական պատճառ-
 ներից — սիրային, աշխատանքային եւ պարա-
 յին եւ — բ՛) երգեր, որոնք կապուած են մտա-
 ծումի հետ — պաշտամունք, բնակավայր,
 հայրենիք: Հետեւեալ տախտակը ցոյց կարող
 է տալ այդ ընտանիքներից իւրաքանչիւրի
 փոխ-յարաբերութիւնը միւսի հետ:



Այս երկու ընտանիքներից իւրաքանչիւրի
 սեռերը իրենց հերթին ունեն քաղաքակրթ-
 ական եւ պատմական արժէքների տարբեր
 աստիճանաւորումներ, ինչպէս այդ ցոյց է տա-
 լիս մեր գրաֆիկ տախտակը: Միրային երգը
 աւելի հին է ծագումով եւ աւելի նախնական,
 քան աշխատանքային երգերը: Նախամարդիկ
 որսորդներ եւ խաշնարածներ էին եւ չունէին
 նստակեաց կեանքին յատուկ գրադումներ,
 իսկ աշխատանքային երգը, որպէս ուրոյն
 ֆոնմ երեւան է գալիս աւելի ուշ դարաշրջ-

ջաններում, սրտեղ աշխատանքի նոր ձևերը
 կատարում են որոշ սիթմով, համաչափու-
 թեամբ եւ երգը հանդիսանում է, որպէս աբն-
 տեսական ազդակ (K. Bücher):

Պարային երաժշտութիւնը, որքան եւ իր
 ծագումով կապուած լինի հոգեբնախօսական
 պատճառների հետ, որպէս ուրոյն ֆոնմ հան-
 դէս է գալիս աւելի ուշ դարաշրջանում, երբ
 մանաւանդ կազմակերպուել էր ընկերային
 աշխատանքը եւ պարը ընդհանրապէս այս
 կամ այն աշխատանքի հետ կապուած մարմ-

նական շարժումների նմանացումն էր: Պարա-
յին երաժշտութեան անբաժան մաս է կազ-
մում նուազը. իսկ այս վերջինը որոշ քաղա-
քակրթական փիճակի արդիւնք է, ստանց որի
նախամարդը նուազարան պատրաստել, լա-
րել, նուազել չէր կարող:

Նման ատտիճանաւորումներ կարող ենք
նշել նաև միւս բնատանիքի սեռերի միջև:
Պաշտամունքի երգերը աւելի հին են քան
այն երգերը, որոնք կապուած են բնակավայրի
կամ հայրենիքի հետ: Հայրենիքի ըմբռնողու-
թիւնը համեմատաբար աւելի նոր է քան թէ
կրօնական զգացումը: Իսկ ծիսական երգերը
երեւան են դալիս երբ արդէն ընկերութիւնը
վերջնականապէս իր կերպարանքը ստացել է:

Մեր ժողովրդական երգերի մէջ բազմա-
թիւ օրինակներ ունենք, որոնք ցոյց են տա-
լիս այս երկու բնատանիքների խրաքանչիւրի
սեռերի միջև եղած օրգանական կապը: Բազ-
մաթիւ երգեր ունենք, որոնց մէջ սեռային,
աշխատանքային և պարային տարրերը միա-
ցած մեզ ներկայանում են պարի ձևի տակ.

Համբարձման երկուշաբթի
Աւայ գուժն ու գերնդին,
Իջայ ծով, ծովի ափին
Քեաղեցի ծայ ծայ խոտեր,
Մանար մանար խոռմեցի:
Եարոջ ձիւն կերցուցի:

Նոյն երեւոյթը մենք տեսնում ենք նաև
մտածումի երգերի միջև: Կրօնի, բնակավայրի
և այլ տարրերը իրար միացած ներկայանում
են մեզ յաճախ զիցազներգութիւնների և
յաճախ միւս սեռերի ձևի տակ.

Խաչ մ'էլեր խայոց՝ ազգին,
Իկե, ինկե մէջ մեր քեավշանին,
Իկե ինկե մէջ կէս գաշտին, մէջ կարօս ածուին,
Ինոր համար անուն դրած կարօս խաչին,
Որ էրէկ գիշեր էկաւ իմ էրագին,
Ասաց. — Ձիկ տարէք դրէք մէջ տաճարին,
Գիշեր լեռս կուտամ ձեր տաճարին,
Յերեկ խով կ'անեմ վէր ձեր գեղին.
Իբաւայ կ'էլնեմ կարօս խաչին,
Մեռնեմ իր շատիկ խրաշքին,
Ուր անխասնելի սուրբ զօրութիւն: (*)

(*) Շ. Աճէմեան. Իրողաքաղ վասսուրա-
կանի հայ ժողովրդ. բանասիրութեան, էջ-
միածին, 1917:

ժողովրդական հաւատքի, նախապաշա-
րումի, բնակավայրի տարրերը օրգանապէս
միացած են այս աւանդավէպի մէջ:

Վերոյիշեալ երկու բնատանիքներից առա-
ջինի երգերի մէջ գերակշռող տարրը ընդ-
հանրապէս ուրիշն է: Աշխատանքի երգերի
մէջ նա ստանում է գերազոյն արժէք. պա-
րերգների մէջ նա հանդիսանում է որպէս
կենտրոն բոլոր տեքստերի արժէքների. նրա-
նից են բղխում մնացեալ երկրորդական ար-
ժէքները. մելոդիքը մնում է երկրորդ պլա-
նում, իսկ բառերը՝ երրորդ: Թմբուկի հար-
ուածն իսկ բառական է նրան, որպէսզի դառ-
նայ երաժշտական արժէք: Եթէ մարդու-
թիւնը խուլ ծնւած լինէր, չէր կարող սակե-
ծել երաժշտութիւն, բայց նա կը ստեղծէր
պարը, որովհետև նա զգում է նաև մկա-
նունքներով — (Շտումֆ):

Մտածումի երգերի մէջ երաժշտական
տարրերին համահաւասար արժէքատուրում
են գրական տարրերը: Երգի առանցքը կազ-
մում է մտածումը և երգի մէջ կոնկրետ գա-
ղափարներ արտայայտող տարրը — բառը,
ստանում է գերազոյն արժէք: Այս երգերի
մէջ թեքստը հեշտութեամբ չի փոփոխւում,
և միւս բնատանիքի հակառակ այստեղ երա-
ժշտական տարրերն են, որ յաճախ կոր-
ցնում են իրենց կոնստրուկտի արժէքը և
զառնում լսի ձայնակցող ֆորմ, ինչպէս օրի-
նակ՝ զիցազներգութիւնների կամ ծիսերգ-
ների մէջ: Ռիթմը, շեշտը մնում են երկրորդ
պլանում: Դրանից էլ այդ երգերը ստանում
են դանդաղ և մելամաղձոտ բնոյթ:

Նոյն բախտին են արժանանում մեր մի
շարք այն աշխատանքային երգերը, որոնք
ընկերակցում են ոչ - ուրիշմիկ շարժումներով
կատարուող աշխատանքներին. ինչպէս օրի-
նակ — կալի, սերմնացանի, այգեկութի եր-
գերը: Ռիթմի բացակայութիւնը տուել է այդ
երգերին դանդաղ և միատիք բնոյթ: Ընդուն-
ւած է այդ երեւոյթը բացատրել նրանով, թէ
այդ երգերը զիւզացու համար կենսական
նշանակութիւն ունեցող աշխատանքների հետ
կապուած լինելով ստանում են մի տեսակ
ազօթքի հանգամանք — դրանից և դանդաղ
ու խօրհրդաւոր բնոյթ: Մինչդեռ բոլորովին
հակառակ երեւոյթն է կաատրում, ոչ թէ
երգերը խորհրդաւոր լինելու պատճառով է,
որ ստանում են դանդաղ և ազօթքի բնոյթ,

այլ դանդաղ բնոյթ ունենալու պատճառով է, որ նրանք ստանում են խորհրդաւոր գոյն: Այդ բանին յաճախ նպաստում են նաև իրենց բառերը, որոնք ունեն իրենց մէջ խոկումի, իմաստասիրութեան և ժողովրդական փիլիսոսփայութեան արժէքներ:

Սերմէ, սերմէ, ա՛յ մշակ,
Սուրբ ա, սուրբ ա քու փեշակ:


Եւ կամ

Գուժնի թախում նմուշ-նմուշ,
Ձրկէր վաստակ քանց էն անուշ,
Գուժան էլնի աշխարհ ի՞նչ ի,
Աշխարհի շէն վեր գուժնին ի:

Ռիթմը իր հոգեբնախօսական գերից բացի՝ մեր ժողովրդական երգերում ստանում է ոճական արխիտեքտոնիք արժէք: Բազմապիսի աշխատանքներին և պարերին ընկերակցող երգերի ինքնայատուկ ուժականութիւնը տալիս է նրանց կայտառ և կեանքոտ բնոյթ և գուրս բերում արեւելեան ծոյլ և դանդաղ միօրինակութիւնից: Մեր հարեւան ժողովրդների երգերի և մերիւնների միջև եղած ակնբախ տարբերութիւններից կարեւորագոյնը ուժիւնն է: Թուրք ժողովրդական երգերի պատմութիւնը չի ճանաչում աշխատանքային և պարային երգեր. այդ ևն ցոյց տալիս զէթ ցարդ եղած բոլոր ուսումնասիրութիւնները և հրատարակութիւնները: Լինե-

լով պատմականօրէն սագմիկ և արշաւող տարր, նրանք չեն ունեցել նստակեաց կեանքին յատուկ զբաղումներ: Միւս կողմից էլ իսլամական կրօնը գուրս է վանել թուրք ժողովրդի ընկերային կեանքից պարը և իր երգը: Դրանք գտնել են մի խումբ պրոֆեսիոնէլ պարողների մենաշնորհը: Հոգեբանական է այն երեւոյթը, որ հայ գիւղերում լաւագոյն պարողը (պարաղլուխ) կամ երգողը ամենքի յարգանքի առարկան է և յաճախ հարեւան գիւղերից հարսանիքի կամ այլ հանդիսութիւնների ժամանակ հրաւիրում են պատիւներով իրենց մօտ, միջոցեւ իսլամական երկիրներում նա ունի ոչ բարի համբաւ...

Այս երկու կարեւոր ազդակների բացակայութիւնը տուել է թուրք ժողովրդական երգերին ճանօթ դանդաղ և միօրինակ բնուրութիւնը: Ռիթմի մէջ գտնուող շարժունութիւնը տուել է իր ուժը ոչ միայն մեր ժողովրդական երգերի այս կամ այն սեռին, այլ և այս կամ այն երգի դանդաղ բաղադրիչ մասերին: Դա նշանակում է այն, որ մեր ժողովրդական երգերից շատերը, անկախ այն բանից, որ ունեն աշխոյժ ուժիւն, ունեն և իրենց ուժիւնի մէջ այլազանութիւններ երգի դանդաղ մասերում: Հետեւեալ շատ տարածուած և սիրուած պարերը ցոյց է տալիս ուժիւնի արտակարգ ոյժը 3 տարբեր արժէքներով — 4/8 — 3/8 — 2/8:



12 տակտից բաղկացած այս շատ յատկանշական երգի մէջ ուժիւնը, բացի ոճական — արխիտեքտոնիք և հոգեբնախօսական — արժէքներից, ստանում է մի երրորդ արժէք — կենսախօսական: Ռիթմը այստեղ ոչ միայն երգի ոճն է յատկանշում կամ ազդում երգող-պարողի հոգու վրայ, այլ և նա դանդաղ է կենսածին արժէք, որից զարգանում է երգի օրգանիզմը: 4/8ին յաջորդող 2/8 չափը ստեղծում է ներքին այնպիսի կոնֆլիկտներ, որոնց լուծման համար հարկաւոր են նոր և

երրորդ արժէքներ: Այդ արժէքները հանդէս են գալիս յաջորդ տաքտի մէջ 3/8 չափի տակ, որը մի կողմից լուծելով առաջին կոնֆլիկտը, միւս կողմից ստեղծում է նոր կոնֆլիկտ, որը լուծուած է նորէն նախնական չափի — 4/8 — մէջ:

Ժողովրդական երգի ոճի համար մի քանի արտաքին և ներքին ազդակներ ևս կան: Արտաքին ազդակներից է երգողի (ոչ ստեղծողի) անհատականութիւնը: Շատ բան է կախուած գեղջուկ երգչի տաղանդից, անձ-

նաւորութիւնից, նոյն իսկ եւ ձայնից: Երգը նրա մօտ երբեմն կրկնուած է մեքենայօրէն, առանց զգացումի, առանց անհատական երանգ ստանալու, երբեմն վերապրում է եւ երբեմն ենթարկում զարգացման նոր հնարաւորութիւններէ: Առաջին դէպքում՝ երգողը հանդիսանում է սոսկական միջնորդ, երկրորդ եւ երրորդ դէպքում՝ երգի կրողը:

Արտաքին միւս ազգական է երգի ծննդավայրը: Ժողովրդական երգը ծնւում է գիւղում, այնտեղ նա ձեւաւորուած է եւ անցնում բերնէ բերան: Ճամբորդների, փոխադրողների եւ արհեստաւարների միջոցով նա անցնում է հարեւան գիւղը, այնտեղից երկրորդ, երրորդ գիւղը: Իւրաքանչիւր գիւղ սակայն տալիս է իր գրոշմը, իր բարբառական շեշտերը, արտայայտութեան ձևերը փոխանցում են երգի վրայ եւ երգի սճը կրում է նոր ազգեցութիւններ: Ժողովրդական երգը իր ծագման շրջանում որ եւ է անհատի զգացման քնները արտայայտելու պահանջից է առաջ գալիս. յետոյ է միայն ժողովուրդը դայն ընդունում որպէս իրենը: Արժէքների այս փոխանցման պրոցեսում յաճախ երգի երաժշտական տարրերը չեն բաւականանում եւ նա ստիպուած է լինում գիմելու արտաերաժշտական տար-

րների աջակցութեան: Այդ տարրերից է երգի թեքտը, բառերը: Սիրային բովանդակութիւն ունեցող երգի եւ կրօնականի միջև գամուտը անմիջական տարբերութիւնը բղխում է բառերից եւ ըստ այնմ էլ ստանում իր արտայայտութիւնը:

Ներքին ազգականներից եւ արտաերաժշտական տարրերից է նաեւ երգի զազափարը — իղէան: Իւրաքանչիւր երգ որոշ զազափարի խորհրդանշանն է: Ընդհանրապէս ժողովրդական երգի մէջ զազափարը բղխում է թեքտից, բայց յաճախ բառը զազափարային աւսակէտից ու է գեր չի խաղում: Պանդրխտային երգերի մէջ երգի բառերը չեն, որ խօսում են երգողի հոգու հետ, այլ պանդրխտութեան զազափարը: Մենք շատ աշխատանքային երգեր ունենք, որոնց սակայն բառերը որ եւ է կապ չունեն կատարուող աշխատանքի հետ: Վանեցոյց նշանատու «Դընդ»ի երգը լատազայն օրինակներից մէկն է: Այս երգը ձայնակցում է պղղուր պատրաստելու աշխատանքին: Դընդը, որ փայտեայ հակայ մուրճն է, օրիմմիկ շարժումներով եւ հարուածներով իջնում է սանդի մէջ եւ թակում պղղուրը (*):



Ժաւր

Այս երգի մէջ սիրային բառերը կատարում են աշխատանքային երգի ֆունկցիա: Անկախ իր բառերից նա մարմնաւորում է աշխատանքը եւ իր զազափարը: Միեւնոյն ձև-

ւով են առաջ գալիս հայրենիքը խորհրդանշող հիմներ, պատերազմ եւ յաղթանակ խորհրդանշող քայլերդներ եւ յեղափոխական երգեր:

(*) Իմ հաւաքածոյից. կրգած է Շ. ԱՅԷմեան, 1925 թ. Թաւրիզում:

Ոճական ներքին ազգականներից է ժողովրդական երգի մեղիւրդը, եղանակաւորուածը:



Այս ձևով տեսնում ենք, որ մեր ժողովրդական երգը իր հետ ունի այլազան եւ շարժուն ուժի, գամմայական ճոխութիւն, պարզ եւ անսեթեւեթ արտայայտութիւն եւ իր խորքում ունի զրական, ազգագրական, պատմական եւ փիլիսոփայական արժէքների սագմեր: Նրա մէջ է արտացոլում ոչ միայն տեղային (լոքալ) երանգը, այլ եւ երանգը իր էպոսի: Նրա մէջ է խտացուած մեր ժողովրդի գեղարուեստական խառնուածքը: Եւ աիրող այն կարծիքը թէ մեր ժողովրդական երգերը մոնոտոն են, լալկան, յառաջացիլ է խնդրին մտկերեսային եւ ոչ լուրջ մօտացումի հետեւանքով:

Ժողովրդական երգի այս հարուստ բազմազանութիւնը եւ զարգացման լայն հնարաւորութիւնները, որ բնականաբար յատուկ են առաւել կամ նուազ չափով բոլոր ժողովուրդների երգերին, Արեւմուտքում դառան երաժշտական


ստեղծագործութեան համար նախանիւթ: Ժողովրդական երգը տուեց արուեստագէտին նիւթը, խորքը, շեշտը եւ երանգը, իսկ արուեստագէտը — ձեւը, ոճը, եւ տեքնիկ հնարաւորութիւններ:

Գրիգորեան երգը, որ եւրոպական երաժշտական քաղաքակրթութեան պատմութեան կարեւորագոյն փուլերից մէկն է խորհրդանշում, ժողովրդական երգի ազդեցութեան տակ ծնունդ տուեց երկու նոր ֆոռմերի. — Հիմնուս եւ Սեկվենց: Այս երկու նոր ձեւերից ծագում առաւ աշխարհիկ միաձայն երգեցողութիւնը եւ ստեղծեց Միաձայնութեան Դարաշրջանը:

Մոնոդիի զարգացման ընթացքը ստեղծեց բազմաձայն երգը եւ նրա նոր ֆոռմերը — կանոն, կաշիա, ֆո-բուտոն, իսկ միւս կողմից իր ուժերը հետզհետէ սպառեց եւ լուծուեց մի

նոր ֆոնտի մէջ, որը յայտնի է Մայտերպե-
զանգ անունով, որի մէջ երգչի—մայտերպին-


զերի— անհատականութիւնը առեց երգի ին-
զիւիզուէլ արժէքներին գերակայութիւն.



Մեր մէջ մայտերպեզանգի գերը մօտաւոր
կերպով կատարել է աշուղական երգը, որ ժողովրդական երգից տարբերում է իր մի քա-
նի շատ բնորոշ առանձնայատկութիւններով:
Ժողովրդական երգի մէջ եղանակը և բառերը
ստեղծում են ընդհանրապէս տարբեր մարդիկ,
տարբեր անհատականութեամբ և տարբեր
զգացումներով, որով նրանց ներքին կապը
թոյլ է և անօրգանական, և դա այն աստիճան,
որ ամէն ոք կարողանում է իր հասկացած և
ուզած ձևով նոր բառեր աւելացնել երգին, ո-
րից արժէքաւորում են երգի հաւաքական
տարբերը: Մինչդեռ աշուղական երգի մէջ
բառերի և ձայների փոխ-յարաբերութիւնը

բղխում է միեւնոյն անհատականութիւնից,
մէկը միւսից անբաժան է, սերտ և կապը
օրգանական: Իրանից և այդ երգերի մէջ ան-
հատական տարբերը ստանում են գերակա-
յութիւն ի հաշիւ հաւաքական տարբերի:

Ժողովրդական երգը էլեմենտար է, նրա ար-
տայայտութիւնը իր տարբերն իսկ են, ձևը և
խորքը միանում են իրար անմիջականօրէն և
ստանց երկրորդական կամըջակներին: Ռիթմը
ընդհանրապէս համաչափ է և նման, որի
պատճառով եւ նուազ օժտուած ուժականու-
թեամբ: Ժողովրդական այս մի փոքրիկ երգի
վերլուծումը այդ տեսակէտից շատ հետաքրք-
րական է.



Այս երգի զարգացումը կատարում է վե-
րի փուլերով: Առաջինը սնի հիմնական-մօթի-

ւային արժէք և կենտրոնն է երգի տեքստ-
նիկ բոլոր ուժերի, իր մէջ է պարփակում հե-

տաղայ փուլերի ամբողջական զարգացման ոչ միայն մեկտղիք, այլ ևս ութմեկ սաղմերը:

Նախաձեռն նոյնութեամբ կրկնում է չորս փուլերում և չնչին տարբերութեամբ մնացեալ երկուսում:




Որչափ ևս երգի դիմամիքը այս ձևով ստանում է նուազ արժէք, բայց մեկտղիքը իր հետզհետէ աճող զրուութեամբ ստեղծում է երգի օրգանական զարգացման և ամբողջացման համար անհրաժեշտ բոլոր պայմանները:

Երաժշտութիւնը օրգանիզմ է. ժողովրդական երգը՝ նրա մանրանկարը. նա սաղմնաւորում է, աճում, հասնում իր զարգացման գագաթնակէտին և ապա սկսում է թուլնալ և քայքայուել: Վերոյիշեալ ժողովրդական երգի

և Բէթհովենի սիմֆոնիի միջև եղած տարբերութիւնը ոչ թէ էութեանն է վերաբերում, այլ թէ գրանցից որը ինչ ձևով և ինչ մեթոտներով է լրացնում իր օրգանական զարգացման շրջագիծը:

Աւելորդ չէր լինի թերևս եթէ մի աշուղական երգ ևս ներկայացնէինք իր զարգացման և տեքստնիք ուժերի առանձնայատկութիւններով, որպէս զի տարբերութիւնը միանգամայն շօշափելի դանոնայ:




Աղուշ Զարծ *)



Տասը չափից բաղկացած այս աշուղական երգը օժտուած է սիմֆոնիկ անօրինակ հարստութեամբ: Մինչ ժողովրդական երգի մէջ 6 չափից չի տատացի կրկնողութիւն էր (սիմֆոնիկ տեսակէտով) և չի աննշան չափով տար-


բեր, այստեղ 10 չափից ոչ մէկը միւսին նման չէ: Կառուցողական համաչափութիւնը, որ յատուկ է պրիմիտիւ երգին, խախտուած է.

(*) Իմ հաւաքած և մշակած նիւթերից:



Իւրաքանչիւր չափ իր անկախ սիթմով հանդիսանում է մի նոր ուժ, որը լուծուած է յաջորդ չափի ուժերի մէջ եւ այսպէս իրար մղելով դիմում են դէպ ի իրենց օրգանական ամբողջականութիւնը: Նոյնպէս եւ մեկտղիք ուժերը: Իւրաքանչիւր չափի մեկտղիք ուժերը այնքան ուրոյն բնոյթ ունեն, որ դժուար է նոյն իսկ որոշել նրանց պերիոդիկ սահմանները. ոչ մի չափի մեկտղիքը միւսին նման չէ:

Այդ բազմաղանութիւնը, ինչպէս եւ միւս տեքստնիկ տարրերի համաչափութեան խախտումը, ծնունդ է տալիս երգի այն ներքին կոնֆլիկտներին, որոնք անհրաժեշտ են իւրաքանչիւր օրգանիզմի զարգացման համար: Երգը ստանում է ուրոյն արտայայտութիւն եւ սճ, որի միջից տեսնուած է աշուղի անհատականութիւնը:



ժողովրդական երգի լօքալ եւ տոնային-ազգային նեղ արժէքները աշուղական երգի մէջ ինտելիգուէլ եւ լիրիք տարրերով փոխուած են միջազգային լայն արժէքների: Մի Սայաթ-Նովա, մի Քուչակ, մի Ջիւանի գառնում են նաեւ թրքական, վրացական, թաթարական աւելի լայն հաւաքականութիւնների սեփականութիւն: Ճիշտ այնպէս, ինչպէս արաբալուրների, մայտերգիւնդերների երգերն էին անցնում Եւրոպայում երկրէ երկիր, առանց սահմանային դժուարութիւնների, մինչդեռ ժողովրդական երգերը մնում էին իրենց նեղ շրջանակում:

զճեակ կերպարանաւորուեց նուիրապետական երաժշտութիւնը:

Ներք դարը դառաւ երաժշտական ոճական եւ էստետիք արժէքների փոխանցման նոր անկիւնադարձ. վերստին արժէքաւորուեցին երգի հաւաքական տարրերը: Նուիրապետական երաժշտութիւնը ձգտեց դէպ ի ժողովրդական երգը: Հայերիս Բղանակ (1450—1517) գերման սիրուած ժողովրդական երգերի բառերը փոխելով եւ կրօնական երգ զարձնելով նպատակ ունէր նուիրապետական երաժշտութեան տալ աւելի ժողովրդական, հաւաքական արժէք:

Որքան ժողովրդական երգը Արեւմտաքում հեռանում էր իր նախնական վիճակից, այնքան աւելի կորցնում էր իր հաւաքական արժէքների ուժը: Մայտերգիւնդերի արուեստի մէջ, ինչպէս ասուեց, երգչի անհատականութիւնը ստացաւ բարձրագոյն արժէք. իսկ բազմաձայնի ստեղծած նոր ֆոռմերից հեռ-

Այդ երգերից մէկ շատ յատկանշականը պահուել է մինչեւ այսօր գերման եկեղեցում: Իր ժամանակի շատ սիրուած հրաժեշտի — *Insbruck, ich muss dich lassen* (Ինսբրուք, ես քեզ պիտի թողնեմ) երգի բառերը փոխելով — *O, Welt, ich muss dich verlassen* (Օ, Աշխարհ, քեզ պիտի լքեմ) դարձրեց կրօնական երգ՝ պահելով նրա եղանակը: Նման

փորձեր բրին նաև Լուդվիկ Ջենֆ, Արնոլդ Բրուխ և այլն: Սակայն այդ տրամադրութիւններին և փորձերին վերջնական կերպարանք տալը վիճակուած էր մի շատ աւելի կարեւոր անձնաւորութեան, Պալեաստրինային (1525 — 1594):

Պալեաստրինայն հանդիսացաւ մի հանդոյց, որի մէջ լուծուեցին նուիրապետական արուեստի հին ոճական ուժերը և սահմանափակեցին նորերը: Նա աստուածային նուիրապետութեան վերջին օրհներգուն էր և միաժամանակ այն շարժիչ ուժը, որի շնորհիւ երաժշտութիւնը ժող. երգի միջոցով ինդիւիդուալիզմից զիմեց կրկին գէպ ի կուլէֆախիդմ: Ժողովրդական պարանուագը Հայզընի մօտ Suite անուն տակ դառաւ երաժշտական ուրոյն ֆոռմ, որից սկզբնաւորուեց նուագարանային համանուագը: Ժողովրդական երգը նրա, ինչպէս և Մոցարտի և մասամբ Բէթհօֆընի գործերի մէջ ստացաւ հիմնական արժէք: «Ein Männlein steht im Walde» գերման ժողովրդական երգից փոխանեց Բէթհօֆընը իր Գրդ սիմֆոնիայի հոյակապ խմբերգը: Հայզըն «La Reine» սիմֆոնիայի երկրորդ մասին մէջ ներշնչուած էր ֆրանսական մի ժողովրդական երգից «La gentille et jeune Lisette», որը իր Փարիզ գտնուած ժամանակ (1784—1786) լսեց և որովհետև Մարի Անթուանէթը շատ էր սիրում այդ երգը, ամբողջ սիմֆոնիան նրան նուիրեց և կոչեց «La Reine de France»: 1870 թուի պատերազմից յետոյ գերման հրատարակչական աները կրճատեցին վերնադրի վերջին բառը: Նման ներշնչումներ ունեցան նաև Հենդելը իտալական ժողովրդական երգից, Մոցարտը՝ սլաւական և նոյն իսկ թրքական, և այլն: Ժողովրդական ստեղծագործութեան տարրերը մուտք գործեցին երաժշտութեան մէջ աւելի ուշ Polonaise, Allemande, Rhapsodie անունների տակ: Սակայն ժողովրդական երգը 19րդ դարում միայն ստացաւ իր զերազոյն արժէքը, որպէս ստեղծագործական նախանիւթ: Ռուսական նորոգիչները (Novator), Դերբիսի, Ալբենիցի, Գրիգի, Տը Ֆալիայի արուեստի մէջ նա ստացաւ իր վերջնական և կատարեալ արտայայտութիւնը:

Ուշագիտ զիտողութիւնը բերում է մեզ այն եզրակացութեան, որ ժողովրդական երգի արժէքաւորման և զարգացման միեւնոյն

փուլերը ունեցել է նաև հայ ժողովրդական երգը, բնականաբար նուագ համեմատութեամբ:

Ինչպէս յայտնի է թարգմանիչները Յունաստանից իրենց հետ Հայաստան բերին յունական արուեստի շունչը, իսկ երկրում տիրում էր պարսկական ազդեցութիւնը: Այդ երկու ազդեցութիւնները, երբայականի հետ, որին ենթարկուել էր մեր եկեղեցական սկզբնական երաժշտութիւնը, հայ եկեղեցում դտան իրենց սինթէզը հայ ժողովրդական երաժշտութեան հետ: Այդ դարուց մեզ մնացած տաղերի և սաղմոսերգութիւնների մէջ այդ պարագան այնքան շեշտուած է, որ նրանք նոյնքան պարսկական են, որքան հայկական կամ յունական, ապա պարսկական քաղաքակրթութեանց մայրամուտը պատճառ եղաւ, որ մեր երաժշտութիւնը՝ մանաւանդ ժողովրդականը՝ թօթափէ իր վրայից օտար ազդեցութիւնները և ստանայ իր ուրոյն կերպարանքը: Հայ անանուն (ժողովրդական) տաղանոց սկսում է իր երգերը յօրինել բոլորովին այլ ոգով քան իր հին կամ աւելի ճիշտ եկեղեցական երգերը: Բացւում է հայ ժողովրդական ստեղծագործ մտքի և եկեղեցու միջև մի անջրպետ, որը գնալով հեռո՛հեռ է խորանում է և հեռացնում այդ երկու եզրերը: Ժողովրդական նոր երգը կամ նրա ոճը իր սովորական հանգամանքով չի կարողանում մուտք գործել եկեղեցի: Եկեղեցին մնաց անձեռնմխելի և պարիսպներով պաշարուած ժողովրդական ստեղծագործական մտքի առջև, իսկ եկեղեցական երաժշտութիւնը՝ այդ պարիսպներից ներս դառնալով կրօնաւորների մենաշնորհը: Սակայն պարիսպներից դուրս ժողովրդական երգը դարերի բնթացքում յղկուեց և կերպեց իր ուրոյն կերպարանքը: Այդ հակամարտութեան հետ է կապուած մեր ժողովրդական երգերի այն խմբաւորումը, որ կոչւում է աշխարհիկ-կրօնական երգեր: Տեսնելով, որ իր ստեղծագործութիւնը չի կարող եկեղեցի մտնել, իսկ եկեղեցական երգը խորթ է իրեն և իր ճաշակին՝ անհամապատասխան, ժողովուրդը ստեղծում է կրօնական երգեր, ևն., նուիրում այս կամ այն Սրբատեղիին, Սուրբին կամ Յիսուսի ծննդեան և այլ օրերին: Մենք ունենք տասնեակներով Աւետիսի երգեր, ինչպէս և երգեր նուիրում Սուրբ Սարգսին, Սուրբ Կարապետին և այլ Սրբատեղիներին:

Ի դէպ է յիշել, որ միեւնոյն հակամարտութիւնը տեղի ունեցաւ նաեւ մեր լեզուի վերաբերմամբ: Գրաբարը, որպէս Սուրբ Գրոց «սրբագան» լեզու, մնաց եկեղեցական պապարիսպաներից ներս, մինչդեռ ժողովրդական լեզուն, որպէս կենդանի ուժ՝ հետզհետէ զարգացաւ և իր քաղաքացիութիւնը պարտադրեց հետագայ սերունդներին:

Ժողովրդական ստեղծագործութեան և եկեղեցու միջև սկսուած այս հակամարտութիւնը հետզհետէ խորացաւ մինչև ժՄ. դարը, երբ հրապարակ եկաւ մեր գեղարուեստի պատմութեան մեծագոյն գէմբերից մէկը — Ներսէս Շնորհալին:

Շնորհալիի մասին շատ է խօսուել և գրուել որպէս տաղասացի կամ բանաստեղծի, սակայն շատ քչերին է յայտնի այն կարեւոր գերը, որ նա խաղացել է մեր երաժշտութեան պատմութեան մէջ: Ինչպէս յայտնի է, Շնորհալին գրում էր ոչ միայն շարականներ և տաղեր, այլ և յօրինում էր նրանց եղանակները, որի համար էլ նա ստացել էր երգեցող կոչումը որ ժամանակի բմբունողութեամբ ունէր երգահանի իմաստ: Արդէն իր ժամանակին իսկ իր բանաստեղծութիւններից աւելի մեծ հմայք է ունեցել իր երաժշտութիւնը: Դարու պատմիչը այսպէս է որակում նրա երաժշտական արժանիքը. — «Եւ թէպէտ հրաշալիք էին բանք երգոց նորա առ միտս իմաստութեան, բայց առաւել զարմանալի էին արուեստք զանագան եղանակացն զոր անմման միմեանցն յօրինէր» (Սամուէլ Անեցի):

Շնորհալին իր բոլոր բարենորոգումներով — վարչական, ծիսական և այլն, — տանում էր հետեւողական մի գիծ — եկեղեցին ժողովրդականացնել: Նա զգում էր, որ այդ գործում եկեղեցական երաժշտութեան մեծ դեր է վերապահուած խաղալու: Նա չէր բաժանում իր նախորդների եկեղեցու անձեռնմխելիութեան տեսակէտը: Նա զգում էր, որ ամէն ինչ որ չի բզխում ժողովրդից, չի կարող ժողովրդականութիւն ստանալ: Ուստի և իր հեղինակած շարականների եղանակները յօրինելիս ներշնչուեց ժողովրդական երգերից: Իր երգերը իրենց աշխոյժ, կեանքոտ, իր իօզ բացատրութեամբ «յորգորակ» և զարգարուն բնոյթով ստացան աննախընթաց ժողովրդականութիւն:

Նա ոչ միայն ժողովրդական երգի եղանակներին յարմարեցնում էր կրօնական բառեր, ինչպէս անում էին ժՁ. դարում Հայրիխ Իգանակ կամ Պալեստրինան միեւնոյն նպատակով, այլ և հակառակը, կրօնական բառերը յաճախ յարմարեցնում էր աշխարհիկ երգերի և նրպատակների: Ըստ պատմիչների, Հոսկլայի Կաթողիկոսարանի և բերդի պահակները զիշեր ժամանակ անհաճոյ կանչերով էին իրար ձայնում: Այդ պարագան զբաւում է նրա ուշադրութիւնը և յատկապէս նրանց համար Դաւթի Սաղմոսներից «Յիշեցոյք ի զիշերի զանուն քո Տէր» և ապա «Չարթոցեալքս»-ը վերածում է աշխարհիկ երգերի, ժողովրդական եղանակներով: Այս երգերը հետագայում կրկին տարուեցին եկեղեցի և այժմ կրգում են Արեւազալի արարողութեան ժամանակ:

Վերացում են պարիսպները, եկեղեցին դառել է մատչելի ոչ միայն իր կրօնի, այլ և իր լեզուով, Նարեկացու (950-1011) խորունկ, խորհրդապաշտ, ծանր լեզուի ինդիվիդուէլ և նուիրպպեատական արժէքները փոխարինում են Շնորհալիի ժողովրդական, մատչելի լեզուի հաւաքական արժէքներով: Ճիշտ այնպէս, ինչպէս այդ տեղի ունեցաւ Պալեստրինայի օրօք եւրոպական երաժշտութեան մէջ, սակայն այն տարբերութեամբ, որ մեզ մօտ այդ տեղի էր ունենում 500 տարի աւելի կանուխ:

Վերջացնելով հայ ժողովրդական երգի յատկութիւնների և իր զարգացման կարեւոր փուլերի քննական ուսումնասիրութիւնը, մեզ կը մնայ լուծել այն հարցը, թէ ինչ մեթոտներով նա կարող է կերտուել մեր երաժշտական նոր ոճի մէջ որպէս նախանխիթ կամ տեքստնիկ արժէք (*):

Փարիզ Ա. ՊԱՏՄԱԳՐԵԱՆ

(*) Այս յօդուածը մի գլուխ է մեր մի ընդարձակ ուսումնասիրութեան, որը կրում է «Հայ երաժշտական ՈՅԻ խնդիրը» ընդհ. վերնագիրը: Ա. Պ.